Արձանագրություն №3

ՀՀ ԱՆ «Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի 2020 թվականի կարիքների համար տպագրական ծառայությունների ձեռքբերման նպատակով ԹԱԿ-ԳՀԾՁԲ-20/77 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

ք.Աբովյան 24.11.2020թ. ժամը 11:00

Նիստին մասնակցում էին՝

նախագահող՝ Նորիկ Խաչատրյան

անդամներ՝ Արմանուշ Դուրգարյան

Քարտուղար՝ Արթուր Աբգարյան

Բացակա՝ Ռուբեն Սիմոնյան

1. Որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելու մասին

Նորիկ Խաչատրյան

1.1 ԹԱԿ-ԳՀԾՁԲ-20/77 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից Արտյոմ Գալստյան Վաչագանի Ա/Ձ-ին 21.11.2020 թվականին էլեկտրոնային փոստով հայտնել է, որ հրաժավում է պայմանագիր կնքելուց, ելնելով ընկերությունում ստեղծված չնախատեսված պայմաններից:

1.2 Հիմք ընդունելով Արտյոմ Գալստյան Վաչագանի Ա/Ձ-ի կողմից էլեկտրոնային փոստով ներկայացված գրությունը հանձնաժողովը որոշեց՝

Արտյոմ Գալստյան Վաչագանի Ա/Ձ-ին զրկել պայմանագիրը կնքելու իրավունքից՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի, այն է՝ *«Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից»:*

1.3 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի պահանջները Արտյոմ Գալստյան Վաչագանի Ա/Ձ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, սահմանված ժամկետում գրավոր ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն:

ընդունվել է որոշում՝ 2 կողմ, 0 դեմ

2.Հանձնաժողովը որոշեց

Նորիկ Խաչատրյան

2.1 ԹԱԿ-ԳՀԾՁԲ-20/77 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել հաջորդող տեղ զբաղեցրած մասնակցին՝ «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ին:

2.2 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

2.3 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն անգործության ժամկետ է սահմանվում 5 օրացուցային օր :

ընդունվել է որոշում՝ 2 կողմ, 0 դեմ

Հանձնաժողովի նախագահող ՝ _____ Նորիկ Խաչատրյան

Անդամ ՝ _____ Արմանուշ Դուրգարյան

Քարտուղար՝ _____ Արթուր Աբգարյան